

**Սյունիքի մարզպետ. «Մեղրու տարածաշրջանի ժողովրդի մտահոգությունն արդարացի է»**

Փետրվար 10 2014

**«Առավոտի» զրուցակիցն է Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը**

**-Պարո՛ն մարզպետ, դեռևս անցյալ տարի մեղրեցիները դիմել էին ձեզ՝ իրենց մտահոգությունը հայտնելով Մեղրու տարածաշրջանում նոր հանքավայրերի հնարավոր շահագործման եւ դրա հետեւանքով տարածաշրջանին սպառնացող աղետալի հետեւանքների մասին: Ի՞նչ ընթացք է ստացել մեղրեցիների դիմումը:**

-Իհարկե, Մեղրու տարածաշրջանի ժողովրդի մտահոգությունն արդարացի է, բայց ներդրողների հետ ունեցած մեր հանդիպումները եւ մեր պետության կողմից սահմանված չափորոշիչներն ու պահանջները, թույլ են տալիս լիարժեք ասելու, որ այսօր, թերեւս, մտահոգվելու անհրաժեշտություն չկա: Եթե լեռնահանքային տնտեսությունում խնդիրներն ու մտահոգությունները պայմանավորված են հիմնականում պոչերի առկայության հետեւանքով հնարավոր հիվանդությունների առաջացման հետ, ապա Մեղրիում տվյալ ձեռնարկությունը չոր պոչերի տեխնոլոգիա է կիրառելու: Այսինքն՝ որպէս պոչ, սկզբունքորեն չի լինելու:

**-Մեղրեցիները նշում են, որ Մեղրու գետը սկիզբ է առնում այդ սարերից եւ հանքավայրի շահագործման դեպքում առաջացող թափոնները լցվելու են Մեղրի գետը, որով էլ ոռոգվում են տարածաշրջանի այգիները: Բնակիչները համոզված են, որ Տաշտունի հանքավայրը մեծ սպառնալիք է լինելու տարածաշրջանի համար: Չե՞ք կարծում, որ տարածաշրջանի բնակչության կարծիքը պետք է հաշվի առնվեր:**

-Նախապէս ուսումնասիրություններ են իրականացվել, համապատասխան գնահատականը տրվել էր, այնպէս չէ, որ ամեն ինչի գնով պետք է արդյունք ստանալ: Այո, եթե այնտեղ մեղրեցին է ապրում, ուրեմն պետք է ավելի շատ մեղրեցու կարծիքը հաշվի առնել, եւ նույն տնտեսվարողն էլ պետության կողմից սահմանված չափորոշիչներով է իրականացնում իր առջեւ դրված

խնդիրները: Եթե լինեն չարաշահումներ, ապա ձեր նշած մտահոգություններն առաջին հերթին մեր կողմից կկանխվեն:

**-Բայց մեղրեցիների կարծիքը ոչ ոք հաշվի չի առել: Որպես ազդակիր համայնք՝ այստեղ նույնիսկ հասարակական լսումներ չեն անցկացվել: Մեղրի կատարած մեր այցի ժամանակ տեղի բնակիչները նշել են, որ նույնիսկ հանքի սեփականատերերին չեն ճանաչում:**

-Մենք այստեղ ենք, որպեսզի մեղրեցու շահը պահենք: Կարծում եմ՝ ներդրում կատարողը (մի քանի միլիոն դոլարի մասին է խոսքը գնում) իր պարտականություններն ու իրավունքները գիտի եւ առաջին հերթին այդ բոլոր խնդիրները հաշվի է առել: Ես ավելորդ եմ համարում հնչեցվող նման զգացմունքային գնահատականները: Եթե մենք այսօր տեսնեինք, որ դա վնասում է Մեղրու տարածաշրջանին, բնականաբար, ցանկալի չէր լինի եւ չէր խրախուսվի դրա գործունեությունը:

**-Այսինքն, ամեն դեպքում այդ հանքավայրը շահագործվելու է:**

-Մեր ունեցած տեղեկություններով՝ հանքավայրի ֆաբրիկան կառուցվում է, երեւի առաջիկայում էլ կաշխատի արդեն: Հանքարդյունաբերության մեջ ավելի շատ խնդիրներ առաջանում են մետալուրգիայում: Ձեզ հավատացնում եմ, որ վերամշակման այն եղանակը, որը պետք է ներդրվի այդ ձեռնարկությունում՝ համապատասխանում է միջազգային ժամանակակից պահանջներին: Մտահոգության առիթ այս պահին չեմ տեսնում եւ կրկին հավաստիացնում եմ, որ ամեն ինչ պետք է անենք զուտ մեղրեցու շահը հաշվի առնելով, հակառակ դեպքում՝ մեր արած գործն իմաստ չունի:

**-Պարո՛ն Հակոբյան, վերջերս քաղաքացիների շրջանում լուրեր են շրջանառվում, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում ինչ-որ նոր գործընթացներ են կատարվում՝ իբրեւ նոր գնորդներ կան, ռուսները պետք է գնեն եւ այլն: Որքանո՞վ են այդ լուրերը հավաստի:**

-Չկա նման բան, համենայն դեպս, ես տեղյակ չեմ նման գործարքների մասին: Միշտ էլ կարող է ինչ-որ բան գնվել կամ վաճառվել, բաժնետիրական ընկերություն է ի վերջո: Կարելո՞րը՝ կոմբինատը շարունակում է իր հունով աշխատել, հարկերը վճարել, իսկ մարդիկ էլ՝ կանոնավոր կերպով

աշխատանքի են գնում: